«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը»

Դաստիարակ՝ Գրիգորյան Գայանե

Մանկապարտեզ՝ «Լիանա մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...…….....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՏԵՍՔՈՎ……12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….....……19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……....…….……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է սաների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակները օգնում են անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Սովորողները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծերից, հարազատներից և դաստիարակներից, ովքեր շրջապատում են երեխային:

Մանկավարժների առջև հստակ պահանջ է դրված, սաների մեջ սերմանել ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը:

Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին՝ չվախենալով ուսման մեջ առկա դժվարություններից:

Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման և զարգացման մեջ հսկայական է մանկավարժի դերը:

Թեմայի արդիականությունը: Երեխայի ինքնուրույնության, նախաձեռնության խթանումը, խոսքի զարգացումն ու ստեղծագործական ունակությունների ձևավորումը նախադպրոցական մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Հենց այս համալիր կարողունակությունների շնորհիվ է տեղի ունենում նախադպրոցականի հոգեկան զարգացումը, սոցիալականցումը, ձևավորվում է նրա ներաշխարհը, ուստի հենց այս հիմնախնդիրների կարևորմամբ էլ պայմանավորված է սույն հետազոտության թեմայի արդիականությունը:

Աշխատանքի նպատակը: Ուսումնասիրել նախադպրոցականների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների դրսևորումները, զարգացման աստիճանը, հնարավոր դժվարություններն այդ համատեքստում:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը: Մշակվել է նախադպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի ձևավորման և զարգացման տեսական հիմունքները, վերջիններիս հետ տարվող կառուցողական մանկավարժական աշխատանքների ձևերն ու եղանակները: Ներկայացվել է գործնականում կիրառվող նոր հմտությունների, կարողությունների, փորձի ամբողջությունը:

Թեմայի շարադրման ընթացքում հանդիպող մտքերի և ձևակերպումների հիմքում ընկած են նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի ընդհանուր դրույթները:

Բացի այս, բնականաբար, թեման ընդհանուր առմամբ համապատասխանում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի ընդհանուր պահանջներին:

Աշխատանքը գրելիս մենք կարևորել ենք բազմաբովանդակ և բազմալեզու գրականության օգտագործումը:

Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու մասերից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր սովորող օժտված է արժանիքներով ու ունակություններով: Իր կարողություններին համապատասխան ստեղծում է նոր նյութական և հոգևոր արժեքներ, որոնք նախկինում երբեք չեն եղել: Այդ արժեքները ծնվում են ինքնուրույնության, նախաձեռնության ու ստեղծագործական ունակությունների շնորհիվ: Նախաձեռնողականությունն ու ստեղծագործական ունակությունը ծնում են նորը, ակներևը, նախկինում երբեք գոյություն չունեցածը: Ստեղծագործական ունակության դրսևորման արդյունքում ստեղծվում է, հայտնաբերվում, հորինվում որևէ նոր բան: Սովորողի ինքնուրույն, նախաձեռնողական ու ստեղծագործական գործունեությունը անկրկնելի է, ինքնօրինակ և եզակի (հասարակական և անհատական առումով): Նույնիսկ բարձրակարգ կենդանիներն ունեն ստեղծագործականության ինչ-որ նախադրյալներ, սակայն ստեղծագործական գործունեությունը բնորոշ է միայն մարդուն: Ստեղծագործական գործունեությունը մարդու աշխատանքային գործընթացում առաջացած ընդունակությունն է՝ իրականությունից ստեղծված նյութից ստեղծելու նոր իրողություն, որը բավարարում է բազմազան հասարակական պահանջմունքների[1]: Ինքնուրույնությունն ու ստեղծարարությունը անձին բնորոշ ստեղծագործական տաղանդի մակարդակն են, որը ձևավորվում է անձի կայուն խառնվածքի ու անհատականության պարագայում: Ստեղծարարությունն անմիջականորեն առնչվում է նախաձեռնողությանն ու

[1]Богат, В.В. Развивать творческое мышление / В.В.Богат // Дошкольное воспитание. – 1994. – № 1. – С. 17-19. Богат, В.В. Развивать творческое мышление / В.В.Богат // Дошкольное воспитание. – 1994. – № 1, стр 18.

ինտելեկտին, այն ինտելեկտի զարգացման որոշակի աստիճան է և հանդես է գալիս ինտելեկտի գործառույթին զուգահեռ, կախված է անձի հոգեբանական բնութագրից: Նախաձեռնությունը, ինքնուրույնությունը, առնչվելով մտածողության բաղադրատարրերին, իրենց նախադրյալներով գծագրում են սովորողի մտավոր, ստեղծագործական ունակությունների սահմանները, հնարավորություն է տալիս վերարտադրելու ձեռք բերած գիտելիքները, գործի դնելու մտածողությունը[2]: Ստեղծագործական ունակությունը ակներև է դարձնում մտածողության դրսևորման յուրահատկությունը, սովորողի ունակությունն է դատողություններ և եզրահանգումներ անելու կյանքի և իրականության բազմազան իրողությունների վերաբերյալ: Ստեղծագործական, նախաձեռնական ունակությունների զարգացումն ու դրսևորումն անմիջականորեն առնչվում են ինտելեկտին, որի միջոցով էլ մարդը կարողանում է արտահայտել գաղափարներն ու մտահաղացումները:

Նախադպրոցական հաստատություններում սաների զարգացման, նրանց աշխարհայացքի ձևավորման նախապայմաններից գրեթե առաջնայինը բանավոր խոսքի զարգացումն է: Բանավոր խոսքին տիրապետում են խոսելու միջոցով, և կարևոր խնդիր է, որ երեխային հնարավորություն տրվի անկաշկանդ խոսելու, արտահայտվելու: Երեխայի համար պետք է անընդհատ ապահովել շփման ու հաղորդակցման համար լիարժեք պայմաններ, հարկավոր է թույլ տալ, որ երեխան իր մեջ կուտակված երևակայությունները, պատկերացումներն ու երազանքներն անպայման արտաբերի: Այսպես մենք չենք նվաստացնում նրա կամարտահայտության իրավունքը, ավելին՝ երեխան ավելի արագ է ինտեգրվում սոցիալական միջավայրին ու գիտակցում իր դերն այդտեղ: Կարևոր է պայմաններ ստեղծել երեխաների խոսքի ոգեշնչման համար, ինչը նրանց խրախուսում է, իսկ խոսքն անհամեմատ ակտիվանում է: Խոսքի ոգեշնչման առկայությունը նշանակում է,

[2] Выготский, Л.С. Воображение и его развитие в детском возрасте. В 6-ти т. Т. 6 / Л.С. Выготский. – М.: Наука, 1982, стр. 101.

որ երեխան ունի ներքին մոտիվացիա արտահայտել իր մտքերը: Դա տեղի է ունենում հաղորդակցության հանգիստ, բնական միջավայրում[3]:

Բանավոր խոսքի զարգացման ամենաարդյունավետ ձևն, անշուշտ, բնական հաղորդակցումն է: Շատ կարևոր է ապահովել բնական հաղորդակցության ձևերի բազմազանությունը երեխայի խոսքի զարգացման գործընթացում: Որքան զարգացած է նախադպրոցականի խոսքը, այնքան նա ավելի ինքնուրույն է, նախաձեռնող ու ակտիվ:

Անընդհատ մտավոր գործունեություն կատարող երեխայի միտքը գնալով ավելի կազմակերպված է դառնում, հետևապես նաև խոսքն է լինում տրամաբանված և իմաստալից: Սահուն խոսքը մտավոր բարձր զարգացման արդյունքն է: Այսպիսով, նախադպրոցականի ընդհանուր զարգացման, ինքնուրույնության ու նախաձեռնողականության խթանման, ինչպես նաև մտավոր դաստիարակության խնդիրների համակարգում առանձնանանում է խոսքի զարգացումը: Զրույցը բանավոր խոսքի զարգացման գործնական միջոցներից է: Զրույցի կազմակերպումը ավելի մեծ հմտություն է ենթադրում, քան բուն զրուցելու կարողությունը: Նախադպրոցական մանկավարժության մեջ զրույցը դիտարկվում է որպես շրջակա միջավայրն ծանոթացման, ինչպես նաև կապակցման խոսքի զարգացման ու երեխայի սոցիալականացման միջոց: Այս համատեքստում շատ կարևոր է զրույցի նշանակությունը երեխայի մտավոր առաջընթացի համար, քանի որ այն նպաստում է նախադպրոցականի մտածողության զարգացմանը, օգնում է իմաստավորելու սեփական փորձը, ճիշտ ձևակերպելու միտքը, լսելու և հասկանալու ուրիշի խոսքը:[4]

Նախաձեռնողականությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Չէ՞ որ մի բան է տարաբնույթ մտքեր ունենալ, իսկ մեկ այլ բան՝ այդ հանճարեղ մտքերը զարգացնելն ու կյանքի կոչելը՝ ձեռնարկելով հստակ քայլեր: Պակաս կարևոր չէ ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը,

[3] Глотова, Г.А. Творческая одаренность личности: Проблемы и методы исследования / Г.А. Глотова. – Екатеринбург, 2012, стр. 89.

[4] Козлова С. А., Куликова Т. А. , Дошкольная педагогика: Учеб. пособие для студ. сред. пед. учеб. заведений. - 3-е изд., исправ. и доп. - М., 2001, стр. 113.

կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար, միջանձնային շփումներում լինել բարեվարք, հանդուրժող:

Երեխան տանը, բակում, հարազատների հետ շփման ժամանակ սկսում է երկխոսել, գտնել իրեն հետաքրքրող միջավայր ու թեմա, որպեսզի բավարարի իր տարիքին բնորոշ հետաքրքրասիրությունը: Շատ կարևոր է, որ երեխաներն ավելի շատ խոսեն, արտահայտեն իրենց մտքերը, հետաքրքրվեն, հարցեր տան, արտահայտեն իրենց կարծիքը: Դաստիարակը պետք է կարողանա պահը որսա և ակտիվություն հաղորդի սաների գործողություններին, թույլ տա, որ վերջիններս հաճախակի ինքնուրույն լինեն, նախաձեռնեն խաղեր, կիսվեն իրենց մտահոգություններով: Բավականին արդյունավետ են ուսուցման գործնական մեթոդները: Ուսուցման գործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտությունները և մոդելավորումը: Ակտիվ ուսուցման մեթոդները (փոխգործուն մեթոդները) նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումներին ու մտորումներին, դրանց քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը: Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և շատ արդյունավետ են: Փոխգործուն մեթոդները բացառում են որևէ մեթոդի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաև մեկ մեթոդի գերակշռությունը մյուսների նկատմամբ[5]:

[5] Козлова С. А., Куликова Т. А. , Дошкольная педагогика, стр. 119.

Փաստորեն, կարելի է արձանագրել, որ ուսուցման երեխայակենտրոն մոտեցումը բավականին խոսուն է ու դաստիարակին հնարավորություն է տալիս լինել ուղղորդող-ուսուցանողի դերում՝ խրախուսելով երեխայի ինքնուրույն ձեռքբերումները: Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են՝ երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը, հետաքրքրությունների բացահայտումը, համագործակցային կարողությունների զարգացումը, անհատական առանձնահատկությունների բացահայտումը, հաղորդակցական ունակությունների ձևավորումը, տրամաբանական մտածողության զարգացումը, ինքնուրույնության խրախուսումը, վերլուծական կարողությունների ձևավորումը: Դաստիարակի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից:

Այսպիսով, փոխգործուն մեթոդների կիրառությամբ աշխատանքը թույլ կտա, որ երեխան նախադպրոցական հաստատությունից դուրս՝ առանց դաստիարակի միջամտության ու անմիջական օգնության, ինքնաարտահայտման, ինքնադրսևորման դժվարություններ չունենա, ինտեգրվի միջավայրին, ինքնուրույն նկարի, ծեփի, հաշվի, արտահայտի իր հույզերն ու զգացողությունները: Սրանք նախադպրոցականի առաջին հաղթանակներն են, որոնց հենքի վրա պետք է ձևավորվի ապագա դպրոցականը, անհատը, քաղաքացին:

Որպեսզի դաստիարակը կարողանա սանի մեջ խթանել ստեղծագործական ունակությունները, հարկավոր է երեխաներին չդնել կաղապարների մեջ, թույլ տալ ինքնաարտահայտման, սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտելու, ինքնուրույն գործունեություն կատարելու: Նկարչության, երաժշտության, մաթեմատիկայի պարապմունքների ժամանակ շատ հարկավոր է խրախուսել երեխաների ինքնուրույն գործունեությունը, քանի որ հենց նման կերպ կարելի է հիմք նախապատրաստել, որ երեխան անցնցում անցնի հնարավոր դժվարությունների միջով, տեսնի իրեն շրջապատող գեղագիտությունը, ստեղծագործաբար մոտենա իր աշխատանքին: Կերպարվեստի պարապունքի շրջանակներում կարելի է խնդրել, որ երեխան պատմի իր նկարի մասին, հիմնավորի գույների ընտրությունը, բնության գրկում զբոսանքներից հետո պատմի իր

զգացողությունների, նախընտրելի եղանակի, մի խոսքով՝ սիրածի ու չսիրածի, հասկացածի ու չհասկացածի մասին[6]: Այլ խոսքով՝ հարկավոր է նախադպրոցականին անդադար խոսեցնել, հարցեր տալ, խնդրել, որ երկխոսի, կիսվի իր մտածմունքներով, իր բառերով վերաշարադրի հեքիաթը, դուրս նայի պատուհանից ու պատմի այն , ինչ տեսնում է, առանց դաստիարակի օգնությամբ նկարի, ծեփի, աշխատի կոնստրուկտորներով:

Նախադպրոցական կրթության համակարգը պետք է ուղղված լինի ոչ միայն գիտելիքներով հարուստ, մտավոր գործունեության ընդունակ երեխայի զարգացմանը, այլև նրա անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների զարգացմանը: Նախադպրոցական տարիքն առաջին հերթին երեխայի անձնավորության կայացման կարևորագույն շրջանն է: Այսպիոսվ, կարող ենք արձանագրել, որ նախադպրոցականի համար շատ կարևոր է ապահովել ինքնուրույնության մթնոլորտ, որտեղ նա կարող է ինքնուրույն գործել, որոշումներ կայացնել, համագործակցել ընկերների հետ, համատեղ աշխատանքի միջոցով ունենալ հաղթանակներ: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորվում է նախադպրոցական կրթության ոլորտի մանկավարժի դերը, որը կոչված է իրականացնելու մի շարք կարևորագույն մասնագիտական գործառույթներ: Արդյունավետ ու դրական աշխատանքի համար մանկավարժ-դաստիարակը պետք է ունենա մասնագիտական ու մարդկային բարձր որակներ, սիրի երեխաներին: Թերևս այս ամենի ամբողջությունը հաշվի առնելով՝ մանկավարժ-դաստիարակն իր աշխատանքն իրականացնելիս պետք է դրսևորի՝

- Երեխաների հետ տարբերակված աշխատանք կատարելու կարողություն:
- Անհատական աշխատանք երեխայի հետ:
- Աշխատանք ծնողների հետ:
- Նախադպրոցական հաստատություն, երեխա, ծնող կապի անքակտելի կապի բնականոն ապահովում և համագործակցության կարևորում:

[6] Байназарова, Т.Б., Сыздыкбаева, А.Д. Нетрадиционные техники рисования как путь развития творческих способностей дошкольников / Т.Б. Байназарова, А.Д. Сыздыкбаева // Сибирский педагогический журнал. – 2013. – № 3. – С. 77-80.

- Ընդհանուր զարգացման մակարդակի, երեխաների առանձնահատկությունների գնահատման կարողություն:
- Երեխաների գործունեության գործընթացում նրանց կարողունակությունների գնահատումը իրականացնելու կարողություն:
- Երեխաների հետ անկաշկանդ շփվելու կարողություն:
- Երեխաների ստեղծագործ մտածողությունը խթանելու կարողություն:
- Համընդհանուր բարեվարքության կանոնների ուսուցումը կազմակերպելու և դրանք վերահսկելու կարողություն:
- Բանավոր խոսքի սաղմնավորման և հետագա զարգացման փուլերում այն խրախուսելու, զարգացնելու կարողություն:
- Համակարգված աշխատելու կարողություն:
- Մի շարք մեթոդներ ու հնարներ գործնականում կիրառելու կարողություն:
- Ինքնազարգացում, ինքնակրթություն, բացթողումների շտկում:

Այսպիսով, մանկավարժ-դաստիարակը պետք է փորձի ֆիզիկական, գեղագիտական, բարոյական ու մտավոր դաստիարակության առանցքում դնել երեխային՝ հաշվի առնելով վերջինիս անհատական պահանջմունքները, գիտակցական մակարդակը, կարողությունները, հմտությունները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՏԵՍՔՈՎ

Պարապմունք «Կախարդական ծառ»

Պլան

Թեմա՝ Բնությունը՝ իմ աչքերով

Խումբ՝ ավագ

Միջավայրը՝ խմբասենյակ

Նպատակը՝

1. Երեխաներին սովորեցնել ստեղծել հեքիաթային պատկերներ։
2. Ամրակայել ծառի ձևը թղթին ճիշտ հաղորդելու հմտությունները, գունազգացողությունը։
3. Զարգացնել երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, խոսքը։

Վերջնարդյունք՝ կարողանան ծառի իրական պատկերումը համադրել իրենց երևակայության հետ

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարչական ալբոմի թուղթ, գունավոր մատիտներ, ջրաներկ։

Մեթոդներ

Ընթերցանություն, նկարների դիտում, հարցեր, զրույց։

Կարողունակություն՝ լեզվական և հաղորդակցական, մշակութային։

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ. ԽՀ- (ա), (գ), (զ), (ը), Ի- (գ), (դ), Շ- (թ)

Խթանման փուլ

Երեխաներին հիշեցնել՝ ինչ տեսակի ծառեր կան։ Հարցնել.

-Ի՞նչով են կարևոր ծառները մարդկանց և շրջակա միջավայրի համար։

-Ե՞րբ են ծաղկում, պտուղ տալիս դրանք։

-Կեցցեք, երեխաներ։

Պատմել, որ կան նաև հեքիաթային ծառեր, որոնք ևս ունեն բուն, հաստ ու բարակ ճյուղեր, տերևներ, պտուղներ, սակայն այդ ծառերի ճյուղերը, տերևները, պտուղները կարող են կախարդական լինել և հրաշքներ գործել։

Իմաստի ընկալման փուլ

Այնուհետև դաստիարակն ընթերցում է որևէ հեքիաթից մի հատված, որում ծառերը խոսում և մտածում են մարդկանց պես.

Իմաստուններից մեկը հարցում արավ ծառերին և ասաց.

– Ի՞նչն է պատճառը, որ դուք ինչքան բարձրանում եք, այնքան էլ խորը արմատներ եք գցում։

Եվ ծառերը այսպես պատասխանեցին.

– Ինքդ իմաստուն լինելով, ինչպե՞ս է որ չգիտես, որ մենք չենք կարող այսքան ճյուղեր կրելով մեզ վրա, դիմանալ հողմերի բռնությանը, եթե խորը արմատներ չգցենք։ Տեսնում ես մեր եղբայր հաճարի և փիճի ծառերը, որոնք թեպետ և բազմաճյուղ չեն, բայց դարձյալ քամիներին ընդդիմադրել չեն կարող, որովհետև խորը արմատներ չունեն։

Ընթերցանությունից հետո հնչում են հետևյալ հարցերը.

- Ինչի՞ մասին էր այս փոքրիկ հեքիաթը։
- Իսկ ըստ ձեզ, ի՞նչ գույնի կարող են լինել կախարդական ծառերի բները, ճյուղերը, տերևները։
- Ի՞նչ պտուղներ կարող են հասունանալ կախարդական ծառերի վրա։

Այնուհետև առաջարկում է նկարել կախարդական ծառեր՝ ով ինչպես ցանկանում է։

Երեխաների ստեղծագործական մոտեցումներն անպայման խրախուսվում են։

Ֆիզկուլտ դադար

Երեխաները կանգնում են շրջանաձև և կատարում «Դոփդոփիկ» բանաստեղծության բովանդակությանը համապատասխան շարժումներ։

Կշռադատման փուլ

- Երեխաներ ձեզ դուր եկավ այսօրվա մեր պարապմունքը։ Ի՞նչ նոր բան իմացաք։

Բոլոր աշխատանքները փակցվում են տեսանելի տեղում, դաստիարակը առաջարկում է ցանկացողներին ներկայացնել իրենց նկարները, պատմել իրենց նկարած ծառի կախարդական հատկությունների մասին։

-Իսկ այժմ, եկեք պարապմունքի ավարտին խաղանք խաղ, որը կոչվում է «Շուկա»։

Ես կընթերցեմ հանելուկներ մրգերի մասին, ովքեր ճիշտ պատասխանեցին կգան գրատախտակի մոտ և հանդես կգան որպես տվյալ միրգը։

Հանելուկներ.

Մենք հատիկով չենք աճում,

Ընտանիքով ենք լինում,

Կարմիր, սպիտակ գույն ունենք,

Անուշ, քաղցր համ ունենք։

Խաղող

Կլոր եմ, գնդակ չեմ,

Կարմաթուշ եմ, դեղձ չեմ,

Քաղցր եմ, մեղր չեմ։

Խնձոր

Թավշյա հագուստ ունեմ,

Կարմիր թուշիկ ունեմ

Ապրում եմ հարավում,

Քաղցրանուշ համ ունեմ։

Դեղձ

Համեղ միրգ է նա,

Քաղցր ու սիրուն,

Սիրում են նրան բոլոր-բոլորը,

Մարդիկ սիրում են, արջերը նույնպես,

Ասե՛ք անունը, այդ համեղ մրգի։

Տանձ

Թագուհին է նա մրգերի,

Դուրսը՝ կարմիր, ներսը՝ կարմիր,

Գլխին ունի փոքրիկ թագ,

Ներսում հատիկ շատ-շատ-շատ:

Նուռ

-Ապրեք բոլորդ, խելացի բալիկներ: Փաստորեն մեր շուկան մեծ է և շատ գունեղ ու լեցուն համեղ մրգերոբ: Բոլորդ էլ ակտիվ մասնակցեցիք և ճիշտ պատասխանեցիք:

Պարապմունքի ժամանակ խնդրել էինք, որ տնօրենը և մեթոդիստը դիտարկեն պարապմունքը և վերջում գրավոր պատասխանեն մի քանի հարցերի: Հարցերի պատասխանների վերլուծությանը ամփոփ անդրադառնալով, նշենք, որ ըստ *տնօրենի* մենք հասանք պարապմունքի սահմանած նպատակներին և աշխատանքները ուղղված էին երեխաների ստեղծագործելու, երևակայությունը զարգացնելու, ազատ շփվելու, ներկայանալու, ուշադրությունը կենտրոնացնելու և ինքնուրույն մտածելու կարողությունների զարգացմանը: Տնօրենը նշել էր նաև, որ երեխաները իրենց ազատ էին զգում, միևնույն ժամանակ պահում էին կարգ ու կանոնը, ուրախ էին և ոգևորված, հատկապես այն բանից, որ իրենք պատմում էին իրենց նկարած կախարդական ծառի մասին: Մեջբերում. «Թեմայի ընտրությունը շատ կարևոր է նախադպրոցական կրթության մեջ, քանի որ ստեղծագործ և նախաձեռնող երեխան միայն կարող է լինել հոգով ազատ և ձգտել ազատության»: Հետազոտական աշխատանքը միտված է սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման կարևորությունն ընդգծելուն և դրանց ձևավորմանն ուղղված քայլերին:

Նմանատիպ վերլուծություն կատարենք նաև *մեթոդիստի* գրավոր դիտարկման շուրջ: Մեթոդիստը նշել էր, որ ՝ դաստիարակը հասավ պարապմունքի սահմանած նպատակներին և աշխատանքները ուղղված էին երեխաների ազատ շփվելու, ինքնուրույն մտածելուև էմոցիաները ազատ և անկաշկանդ արտահայտելու կարողությունների զարգացմանը: Մեթոդիստը նշել էր, որ երեխաները ուրախ էին, պատրաստակամ և իրենց ազատ էին զգում: Բավականին գրագետ ձևով էին

արտահայտում իրենց մտքերը: Ըստ մեթոդիստի, նախադպրոցական կրթության մեջ թեմայի ընտրությունը կարևորվում է հատկապես նրանով, որ երեխաները տարբեր են, տարբեր են նրանց ընկալումները, ցանկությունները, երազանքներն ու վարքը, սակայն նրանք բոլորը ունեն պահանջմունքներ, որոնք հաճախ տարբեր են, ուստի և յուրաքանչյուրի հետ անհրաժեշտ է տանել անհատական աշխատանք, որպեսզի երեխան ունենա բնականոն զարգացում: Պետք է փորձել ճանաչել նրանց, հասկանալ, թե որ կարողունակությունն է նրանց համար դժվար հասանելի ու աշխատել հենց այդ ուղղությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում: Սակայն մի բան հստակ է, եթե մենք նպատակ ենք դնում զարգացնել նախադպրոցականի խոսքը, ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ որոշակի կոնկրետ գոտում նա ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները: Երեխայի այդ պահանջմունքները բավարարելու համար դաստիարակը պետք է կուտակի նորանոր հմտություններ ու կարողություններ, որպեսզի արդյունավետ աշխատանք տանի: Դաստիարակի և երեխայի շփման մակարդակը, երեխայի վիճակն իմանալը այդ պահին խիստ կարևոր է: Դաստիարակը պետք է երեխաների շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի նրանք մեծանան նախաձեռնող, մտածող, ստեղծագործող և ինքնուրույն:

Բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը թույլ կտա, որ երեխան ժամանակի ընթացքում ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել նախադպրոցական հաստատությունից դուրս: Դաստիարակը զանազան մեթոդների կիրառությամբ պետք է փորձի հարստացնել նախադպրոցականի բառային պաշարը: Զբոսանքի, խաղի կամ ուսումնական պարապունքների ժամանակ հարկավոր է անդադար զրուցել նրա հետ, լսել նրա մտահոգությունները, պարզաբանել այս կամ այն երևույթի մասին նրամ հուզող հարցերը: Այսպիսով, դաստիարակը հիմք է նախապատրաստում, որ առաջիկայում նախադպրոցականն ունենա առաջընթաց ու կարողանա ձևավորել կապակցված խոսք, լինի ավելի ինքնուրույն ու կազմակերպված:

Նախադպրոցական կրթության համակարգը պետք է ուղղված լինի ոչ միայն գիտելիքներով հարուստ, մտավոր գործունեության ընդունակ երեխայի զարգացմանը, այլև նրա անձնային հիմնարար որակների և սոցիալական հմտությունների զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանդրյան Է.Ա., Նախադպրոցական մանկավարժություն, դասագիրք, Երևան, 2003:
2. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2005:
3. Ներսիսյան Լ., Մեթոդական համակարգը գեղարվեստական մանկավարժության մեջ: Գեղարվեստական միտք, Երևան, 2012:
4. Ներսիսյան Լ., Ազատ հաղորդակցության և ինքնակրթության դերը ուսուցման համակարգում: Գեղարվեստական միտք: Երևան, 2013:
5. Վարդումյան Ս., և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ (ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար), Երևան, 2005:
6. Վարդումյան Ս., Հարությունյան Լ., Ջաղինյան Ն., Վարելլա Գ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Տեսություն, մեթոդներ, գնահատում, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, 2003:
7. Байназарова, Т.Б., Сыздыкбаева, А.Д. Нетрадиционные техники рисования как путь развития творческих способностей дошкольников / Т.Б. Байназарова, А.Д. Сыздыкбаева // Сибирский педагогический журнал. – 2013. – № 3. – С. 77-80.
8. Богат, В.В. Развивать творческое мышление / В.В.Богат // Дошкольное воспитание. – 1994. – № 1. – С. 17-19.
9. Боровик, О.В. Развитие воображения. Методические рекомендации /О.В. Боровик. – М.: ООО "ЦГЛ", 2000.
10. Выготский, Л.С. Воображение и его развитие в детском возрасте. В 6-ти т. Т. 6 / Л.С. Выготский. – М.: Наука, 1982.
11. Выготский, Л.С. Воображение и творчество в детском возрасте / Л.С. Выготский. – М. : Просвещение, 1991.
12. Глотова, Г.А. Творческая одаренность личности: Проблемы и методы исследования / Г.А. Глотова. – Екатеринбург, 2012.
13. Ионин Л. Г. Социология культуры, М., 2004.
14. Козлова С. А., Куликова Т. А. , Дошкольная педагогика: Учеб. пособие для студ. сред. пед. учеб. заведений. - 3-е изд., исправ. и доп. - М., 2001.

15. Магомедов Н. М. Методология и методика свободного воспитания. - Самара, 1995.
16. Народное искусство в воспитании детей / Под ред. Т. С. Комаровой. - М., 1997.